

ՆՄՈՒՇ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԽՈՍՎԱԾՔԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅԱՐ

ՀՕԲ ՏՎԱԾ ԻՐԷՔ ԽՐԱՏԸ

Ա՛վալ ժամանա՛կին ըննո՛ւմ ա, շի՛լնում մի մարթ, ունե՛նում ա մի մինումար տղա: Էդ մարթը, շունքի շա՛տ էր ծերացէ, դէ՛ն ընդէ, հա՛յ-հայը գնացէ՝ վա՛յ-վայը մնացէ, տղին ուղից, քանի սաղ ու կենթա՛նի ա, մի փէշա՛կի տա, բա՛լի իրա՛նից յէդը մի կտօր հացի տէ՛ր ըլնի, գլո՛ւսս պահի: Համա խեղճ հէրը ի՛նչ բանի դրէց, ի՛նչ փէշակի տվէց՝ չէլավ, մի տէղ էլա շքնակալէց, թօ՛ղաց, սալախա՛նի արած ընդավ քո՛ւլէքը:

— Զըհա՛նդամը գյօռը,— ասէց հէրը,— ա՛րի դուքան ղնեմ տէ՛նամ, բալի ընդէ սթրո՛ւմ ա:— Բէրէց տղին դո՛ւքան դրէց:

Անց ա կէնում մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րէք ամիս, վէ՛ց ամիս, մախլասի՛ մի՛ տարի, էս մարթն ա, մի դա՜ֆիլ հիվանդանո՛ւմ ա, տեղօվ-բարցօվ թէք ընգնում. կանչում ա տղին:

— Ա՛յ վօրթի,— ասում ա,— տէ՛նում էս՝ հրէս մէ՛ռնում էմ. ինձա՛նից յէդը ի՛նչ պտի անէս. հլա ջա՛հէլ էս, աշխարի խէրն ու շառը չէս գիտա: Վօ՛րթի,— ասում ա,— քէզ ուզում էմ իրէք խրատ տամ, կլսէ՛ս՝ դո՛ւ գիտաս, չէ՛ս լսի՛ էլի դու գիտաս, մէղքն ու վարցքը քո՛ւ շլինքը:

— Ա՛յ հէր,— ասում է տղէն,— ա՛սա, կլսէմ, խի՛ չէմ լսի:

— Ա՛յ վօրթի,— ասում ա,— վօ՛րդէ ըլնէս, ի՛նչ բանի էլ դու-

լուղ անէս, հէնց վօր ժամի ձէնը լսէցիր, ձէռիդ ի՛նչ վռազ բան ըլ-
նի՝ թօ՛ղ, գնա՛ ժամ, աստուհ անոթք արա: էս մի՛ն: Մա՛րթ ա,
վօ՛րթի, կպատա՛հի ճամփա կէթաս, վօր վարար շուր ռաստ դա՛
առանց վալադ մարթի շմնէս անց կէնաս. մի քանի օր էլ յէ՛դ ինկ,
բա՛ն չկա, ընչանք սրա՛ն, նրա՛ն հարցնէս, հարց ու փօրց անէս,
մարթ քթնէս, դա քէզ անփօրձանք անցկացնի: Ըս էլ է՛րկու Վրա
ի՛րէքն էլ, վօ՛րթի, ինձանից քէզ ամանաթ, քշէրը ըսկի ճամփա չէ-
թաս. հէնց վօ՛րդէ մթնէց, վէ՛ր արի, կա՛ց, ընչանք լիսանա. մի՛
ասի, թէ՛ ֆլա՛ն գէղը մօտիկ ա, էթամ հասնէմ, չէ՛:

Հրէ՛ս, վօ՛րթի, է՛ս ա իմ իրէք խրատը. սրանից դէնը դո՛ւ գի-
տաս, կլսէս՝ դո՛ւ գիտաս, չէս լսի՛ է՛լի դու գիտաս, մէղքն ու վարցքը
քու շլինքը:— Ա՛սում ա, ֆոքին տալի:

Տղէն տանում ա հօրը առօք-փառօք, վօնց վօր կարքն ա՛ թա՛-
լում, թողում գալի տուն:

Ա՛նց ա կէնում ըսէնց մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շա-
փաթ, մի՛ ամիս, է՛րկու ամիս, մախլասի, իրէք ամիս՝ օրէն մի օրը
էս տղի ընկէ՛րտինքը, վօր իրա նման առտտուրական ին, ճամփի
թաղա՛րէք էն տէնում, ասում էն. «էթանք Թիֆլիս ապրա՛նքի, դու-
քանի հմար ճօթ-մօթ առնէնք, բէրէնք»: Էդ տղէն էս վօր իմա՛նում
ա, մի՛տք ա անում՝ ինքն էլ հէտնէրը վէ կէնա էթա, համ ա՛ շխարք
տէնա, համ էլ թազա ա՛ պրանք բէրի, լքցնի դուքանը, ծախի:

Գալիս ա ընկօրտանցն ասում.— Յէ՛ս էլ էմ ուզում դա ապ-
րանքի, չէ՞ք տանի:

— Գա՛լիս էս՝ արի,— ասում էն,— խի՛ չէնք տանի:

— Յէ՛փ էք ճամփա ընգնում,— հարցնում ա:

— Ֆլա՛ն օրը,— ասում էն:

Լա՛վ: էս տղէն ա՛ ճամփի թաղա՛րէք ա տէնում, մի սաղ ամսվա
պա՛շար վէր ունում, քօշ ու բարխա՛նա անում, ընկօրտանց հէննա
վէ՛ կէնում, ընգնում ճամփա՛ դպա Թիֆլիս:

Գա՛լիս էն գալի, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛րկու
օր, ի՛րէք օր, մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շափաթ, մախլասի,
մի ամիս՝ հասնում էն Թիֆլիս: Ըստէ ամէն մարթ իրա առտտուրն
ա՛նում ա, պրծնո՛ւմ, լէննա քօմմըքօվ էլ վէր էն կէնում, բէռնէրը
կապօ՛տում, քօշ ու բարխա՛նա անում, քրէհդա՛րնէր բռնում, յէդ
դառնում՝ գալի իրանց յէրկիրը: Քօմմքից յէդը մնում ա էդ տղէն.
դա էլ վօր իրա առտտուրն ա՛նում ա, պրծնո՛ւմ, ինչ վօր դուքանի

հմար պէտքն էր՝ ա՛ռնում, է՛թում ա քրէհարներ կանչում. դալիս էն նրա ապրանքը բարցում ձիանիքը, հէնց վօր լիսը բա՛ցվում ա՝ ընդնում էն ճամփա:

է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աւսոծ դիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ, ճամփին մի վարար ջրի ռաստ էկան, էնքա՛մ վարար, էնքա՛մ վարար՝ հէնց իմանաս հէտը ա՛րին էր բերում: Խէղճէրը մնացել ին գլխների վրէն շիվարած, լին իմանում ի՛նչ անէն, ի՛նչ շանէն, վօ՛նց ջուրն անց կէնան: Քրէհարներն ուղում ին տա, անց կէնա էն դրաղը, տղէն շթողաց, հօր վա՛սիաթը միտը բերէց, թէ. «Վարար ջուր ռաստ դալիս, առանց վալադ մարթի շանցկէնաս»:

— Ձէ՛, ա՛խպէր,— ասէց տղէն,— ըստէ բէռները վէ. դնէնք, էթանք ընտերանք հարց ու փօ՛րց անէնք, բալի մի վալադ մա՛րթ քթնէնք, դա մէղ անփօրցանք գէտն անցկացնի:

Քրէհարներից մինը էն դհիցը ինքն իրան դուզուղացավ.— ի՛նչ կա,— ասէց,— տնա՛շէնէր, վօր էդքամ վախէնում էք. էս թա՛վուր պոռճուր ջրիցն էլ մա՛րթ կվախի. ո՛ւղում էք, յէ՛ս ջուրը մընէմ, յէննա՛ դուր:

Ասէց ու դուզուղավարի ձին քշէց. ջուրը մննիլն ու գլում ընիլը մի՛ն էլավ:

— Հարա՛յ, մադա՛թ, հէխտվէցի, հա՛սէք,— ձէն տվէց մէր դուզուղ քրէհարը: Համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացէ. ընկերտինքը ինչ ա՛րին, շա՛րին, շկարացին խէղճի հավարին հասնի, իրան էլ, իրան ձիուն էլ ջուրը վէ՛ կալավ, տարավ: Դէ հմի ա՛րի տէս էն մէկէլնհրը վօ՛նց են ուրախացէ, վօ՛նց էն ուրախացէ, վօր տղի խօսքին ա՛նկաջ արին, ջուրը շմտան, թն չէ քօմմըքօվ էլ պտի հէխտվէին, էթալին ֆօղէց-ֆօքի կօրչէին: Նօր էդ տղէն ձին նի՛լնում ա, քշում էթում մօտիկ գէղարէնքը, սրա՛ն, նրա՛ն հարց ու փօրց անում, մի վալադ մա՛րթ քթնում, բէ՛րում, լավ-լավ փէշքաշնէր, բօլ փօ՛ղ խոստանում, վօր իրանց գէտն անցկացնի, հանի էն դրա՛ղը: Էդ վալադ մարթն ա՛ դն ջրի սաղրիկ տէղարէնքը ընէ՛նց գիտար, վօնց վօր իրա հինգ մատը, ձին նի՛ ա ըլնում, ընգնում աղաք, սաղալամաթ դրանց ջուրն ա՛նցկացնում, էլ յէդ թողում, էթում իրա բանին:

Թիֆլիսից վօր նօ՛ր ին դուս էկէ, էդ տղին ճամփին մի բէզըրգչան ռաստ էկավ: Էս բէզրգչանը ընդէ իրա խրիդն արէ, է՛թում էք

Գլանջաւ. էդ տղի խելքն ու քլամալը վօր տէհաւ, շա՛տ հաւանէց:

— Տղա՛,— հարցրէց բէզրգլանը,— վօ՞րդիանցի էս:

— Զլա՛ն գէղիցն էմ,— ասէց տղէն:

— Ինձ հէննա ընկէր չէ՞ս ընի:

— Խի՛ չէմ ընի,— ասէց,— համա հէրս մէռնէլիս վասիաթ ա՛րէ, չէմ գիտա՝ դու էլ դարձու կըլնէս, թե չէ:

— Ի՛նչ վասիաթ ա, ա՛սա տէնամ. թէ ինձ խէր ա՛ ձէռ կտա, ի՛նչ պտի ասէմ, վօր դարձու չըլնէմ:

— Վօ՛րդէ ըլնէմ,— ասէց տղէն,— ի՛նչքամ վառ դ բան էլ ընի ձէռիս, հէնց վօր ժամէրը տվին, ալբիալը պտի վէ քցէմ, թօղամ էթամ ժամ, ասսոն աղօթք անէմ: Էս մի՛ն: Շամփա էթալիս,— ասէց,— վօ՛րդէ մթնի, ընդէ պտի վէ՛ գամ, կէ՛նսմ ընչանք լիսանա: Էս է՛րկու: Վրա ի՛րէքն էլ, վօր,— ասէց,— վարար ջուր ռաստ գալիս՝ առանց վալադ մարթի շանցկէնամ, վօնց վօր դու քու աչքովը տէհար:

— Տնա՛շէն,— ասէց բէզրգլանը,— բա՛ն գիտաս՝ բա՛ն ասա, թէ չէ էդ թաւուր խէլօք խրատնէրին օվ շի դարձու ըլնի:

— Լա՛վ, վօր դա՛րձու է՛ս, բաս յէս էլ էմ դարձու: Ա՛րի ընկէրանանք:

Ընկէրա՛նում էն: Ըստէ բէռնէրը բա՛ց էն անում, իրար ապրանք համբրո՛ւմ, հա՛շիվ անում, տղի ապրանքը բէզրգլանի ապրանքից քի՛չ ա դուս գալի. ընդուր հմար էլ տղէն դառնում ա բէզրգլանի շարէքդարը, սաքի թե՛ ի՛նչ վօր աշխատէն, շօրս փայից մինը նրա՛նը պտի ըլնի:

— Տղա՛,— ասում ա բէզրգլանը,— բաս վօր ըտէ՛նց ա, դու վէ՛, աղաք-աղաք զնա՛ Գլանջա, թաղա՛րէք տէս, ընչանք յէս գամ: Հրէս քէզ նշանաբան կտամ,— ասում ա,— կտանէս, կտաս կնկանս, կնիկս դուքանի բալանիքը կտա, կէթաս բա՛ց կանէս, ա՛վլիլ կտաս, կթամդացնէ՛ս, վօր յէս գամ թէ չէ՛ հա՛զիր ըլնի, բէրէնք ապրանքը դարսօտէնք, մէր բանին կէնանք:

— Լա՛վ,— ասում ա տղէն,— կէ՛թամ:

Բէզրգլանը նշանաբանը տալիս ա տղի՛ն. տղէն վէ՛ր ա ունում, դնում ծօ՛ցը, նիլնում ձին՝ յա՛լլա դպա Գլանջա:

Է՛թում ա, է՛թում ա, է՛թում ա, շատն ու քիչն աստօծ գիտա՝ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ, քէր, ցէրէկ էթում ա, հասնում ա Գլանջա: Էթում ա սրա՛ն, նրա՛ն հարց ու փօրց անում:

— Յլա՛ն բէղրդյանի տունը վո՞րն ա,— ասում ա:

— Հրէս է՛ս ա,— ասում էն:

Տղէն էթում ա դուռը ծէծում, բէղրդյանի կնիկը դուռ ա գալի, տէնում՝ մի ջա՛հել, սի՛րուն, բո՛յով-բուսա՛թով տղա հրէն ընդէ կաննած: Կնիկը տղին տէնալու բաշտան՝ խէլքամաղ ա ըլնում, մնում:

— Ո՛ւմ էս ուղում,— հարցնում ա կնիկը:

— Յլա՛ն բէղրդյանի տունն է՛ս ա,— հարցնում ա:

— Հա՛, է՛ս ա,— ասում ա կնիկը:— Խի՞ վոր:

Տղէն նշանաբանը ծօցիցը հա՛նում ա, տալի կնկանը ու մին-մին ասում, թէ ինքն օ՛վ ա, յա ի՛նչ բանի հմար ա էկէ: Կնիկը վոր իմանում ա՝ բանը ընչումն ա, տղին ուրախ-ուրախ կա՛նչում ա, տանում տուն:

— Ա՛յ դու բարօ՛վ, հա՛ղար բարին էս էկէ,— ասում ա կնիկը.— ամէն ճամփէդ սա՛լամաթ. վո՞նց էս, լա՛վ էս: Ախար յէս մէ-ռա քու ճամփէն պահէլօն. խի՞ էսքամ յէղացար:

Տղէն մնում ա սառած՝ մտիկ անէլօն կնկա էրէսին:

«Ախպէր,— ասում ա ինքն իրան,— յէ՛ս օվ, էս կնի՛կն օվ, վոր էսքամ հարց ու փօրց ա անում, էսքամ ուղում, խնդում, ծիծաղում, ուրախանում, աշխարօվ մին ըլնում»:

Ղօ՛րթ ա, կնկա միտքը ծուռն էր, համա խէղճ տղէն միա՛միտ, սիրտը դուռ, նրան ընէ՛նց էր մտիկ տալի, վօնց վոր իրա հալալ քվօրը:

Կնիկը տէհալ, վոր չէ՛, սա իրա ասածը չի, էլ ձէն-ծալտօն չհանէց, հէննէն ինադ ընկալ. «Թօ՛ղ մի մարթս գա,— ասէց ինքն իրան,— էն վախտը յէ՛ս դիտամ՝ դո՛ւ: Գնաց դուքանի բալանիքը բէրէց, տվէց տղին. տղէն տարալ դուքանը բա՛ց արէց, պուճախէ-պուճախ լալ, սիրուն ջրջրհա՛նէց, սրիօ՛տէց, հա՛ղիւր արէց:

Անցկացալ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, բէղրդյանն է՛կալ, տէհալ՝ դուքանը սիրուն ջրջրհա՛նած, ա՛վլած, ամէն բան իրա տէ՛ղը, սա՛րքին, կա՛րքին՝ ուրախացալ, աշխարօվ մին էլալ, վոր էս թա-վուր դօշաղ տղա՛ ա ընկէ ձէռը: Բէրէցին էրկսով բէռնէրը քանդօ-տէ՛ցին, ապրանքը լքցրին դո՛ւքանը, է՛, վօնց վոր կա՛րքն էր՝ դար-սօտէ՛ցին, իրանց առուտուրին, իրանց բանին կացան: Անցկացալ մի վախտ՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րէք ամիս, օրէն մի օրը բէ-ղրդյանի կնիկը կպալ մարթի յախէն:

— Ա՛յ մարթ,— ասէց,— քէղ մի սրռ պտի ասէմ:

— Ա՛սա,— ասէց,— ա՛յ կնիկ. ասա տէնամ՝ ի՛նչ էս ասում:

— Պտի էդ տղին,— ասէց,— ջո՛ւղաբ անէս, վօր նրա էրէսը էլ շտէնամ:

— Խի՛, ա՛յ կնիկ, քէզ ի՛նչ ա արէ,— ասէց մարթը:

— Բա՛ չէ՞ս ասի,— ասէց,— ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէ՛նց բան. ուզում էր իմ հալալը հարամի՞ս:— Նստում ա մարթին մին-մին նա՛ղլ անում, մնին էրկու ավէլացնում:

— Ղօ՛րթ:

— Ղօ՛րթ:

— Բա՛ վօնց անէմ, ա՛յ կնիկ, էդ թավուր աչքաբաց, դալում տղին վօ՛նց ջուղար անէմ. գիտա՞ս էս մի բանի ամսումը ինձ աշխարքի խէր ա տվէ: Սավալի էդ,— ասէց,— հէնէն տա՛րօվ էմ կապնըվէ, վօր դո՛ւս էլ անէմ՝ պտի սաղ տարվա հախը տամ:

— Դո՛ւ գիտաս, ա՛յ մարթ,— ասում ա կնիկը,— դո՛ւս կանէս՝ լավ, չէ՛ս դուս անի՝ յէ՛ս գլուխս կառնէմ, ըստիան կկօրչէմ:

Խէղճ մարթը մնացել էր էրկու ջրի արանքին, շէր գիտա՛ ի՛նչ անի, ի՛նչ շանի: Տղին ջուղաբ անէր՝ պտի սաղ տարվա հախը տար, դո՛ւս շանէր՝ շէր ըլնի, կնկա ձէռիցը չպտի պրծնէր: Մի՛տք արէց, մի՛տք արէց, վէրջն ասէց. «Բալի կարէնամ էդ տղին մի դժօվ կօրցնի, յա սըպանիլ տա, թէ չէ՛ էլ ուրիշ ճա՛ր, իլլաջ չկա»: Էդ բէզրգյանը իրանց տան կշտին մի փուռ ունէր. վէ կացալ դնաց փռնչու յախէն կպավ:

— Փռնչի՛,— ասէց,— քէզ մի բան կասէմ, պտի ա՛նկաջ անէս:

— Ա՛շքիս վրէն, ա՛ղա ջան, է՛րկուսն ասա,— ասէց փռնչին:

— Էքուց էն գլխէն,— ասէց,— մընին կղրգէմ կուշտդ, կգա, կհարցնի, թէ. «Ա՛ղէս ասում էր՝ ինչ վօր քէզ հրամայէցի, արէ՛ցիր, թէ չէ՞: Էս վօր կասի, էլ մտիկ չէս տա, էն սհաթը վէ՛ կունէս դրան սաղ-սաղ կկօխէս փուռը:

— Լա՛վ,— ասէց փռնչին,— դու դրկա՛, նրանից դէնը յէ՛ս գիտամ:

Իրիգունը տղէն դուքանիցն էկավ տուն, բէզրգյանը նրան, վօր ասէս, բան չասէց, սաքի թէ բանից խարար չի: Կնիկը հացը բէրէց քցէ՛ց, նստէ՛ցին, կէ՛րան, կշտա՛ցան, պրծա՛ն, դէսից-դէնից ասէ՛ցին, խօսա՛ցին, զրի՛ց արին՝ ընշանք քնէլու վախտը:

Քնէլու վախտը վօր էկավ, բէզրգյանը տղին ասէց.— Է՛քուց էն գլխէն կէթաս մէր փռնչու կուշտը, դուռը կծէ՛ծէս, կհարցնէս. «Աղէս ինչ վօր հրամայէլ էր՝ արէ՛ցիր, թէ չէ՞: Կա՛սէս, էլ յէդ կէթաս քու բանին:

— Լա՛ւ, — ասէց տղէն, — կէթամ, կհարցնէ՛մ:

Պառկէցին, քնէցին: Տղէն վօր բանից խաբար չէր, էն գլխէն թէ՛ դէ՛ կացաւ, շօրէրը հա՛քաւ, էրէսը լվա՛ց, գնաց փռնշու կուշտը, վօր բէզրգյանն ինչ ապսպրէլ էր՝ ա՛սի: Քարը վէ կալաւ, վօր դուռը ծէծի, մըն էլ տէհաւ՝ ծը՛նգ, ժամէրը տվին: Ալրիալը քարը ձէռիցը վէ՛ քցէց, հօր վասիաթը միտն ընգաւ, ասէց. «Էթամ ժամ, կէնամ, ընշանք ժամը դուս դա, էն վախտն էլ փուռը բա՛ց կընի, կգամ կասէմ»: Թօղաց գնաց ժամ:

Լա՛ւ, Բէզրգյանի կնիկը շունքի մարթի միտքը գիտար, էն զըլխէն թէ՛ դէ՛ կացաւ, թաղա շօրէրը հա՛քաւ, լավ սիրուն զո՛ւքվէց, զարթա՛րվէց, կօ՛կվէց՝ ուրախ-ուրախ գնաց ժամ: Մի քիչ ժամումը կացաւ, ա՛ղօթք արէց (աղօթքը գլխին խոօլ կէնա), ասէց. «Էթամ մի փռնշուն հարցնէմ, տէնամ՝ մարթիս ասածն ա՛րէլ ա, թէ չէ»: Մի բանի հէտ ծո՛ւնդը դրէց, էրէսին խաչ հանէց, դուս էկաւ, գնաց փռնշու կուշտը, դուռը ծէծէց:

— Էդ օ՞ւլ էս, — ձէն տվէց փռնշին:

— Յէ՛ս էմ, — ասէց, — դուռը բա՛ց արա:

Փռնշին դուռը բա՛ց արէց, տէհաւ՝ իրա աղի կնիկը:

— Հը՛, — հարցրէց կնիկը, — աղէ՛դ քէ՛զ բան էր հրամայէ՛ արէ՞ցիր, թէ չէ:

Փռնշին էլ ձէն-ծպտօն չհանէց, ալրիալը վէ՛ կալաւ կնկանը սաղ-սաղ կօխէց թէ՛ փուռը: Խէղճը հէնց իմացաւ՝ աղէն դրա՛ հմար ա թամբահ արէ. «Օ՞ւլ գիտա, — միտք արէց ինքն իրան, — բա՛լի մի մոխաննաթություն ա արէ մարթին, նա էլ ուզում ա դրան կօրցնի»:

Ժամը դուս ա դալի, պրծնում, տղէն գալիս ա փռնշու կուշտը:

— Փռնշի՛, — ասում ա, — աղէ՛դ ինչ վօր թամբահ էր արէ՛ արէ՞ցիր, թէ չէ:

— Հա՛, — ասում ա փռնշին, — արէցի:

Տղէն թօղում ա գալի տուն, բէզրգյանին շուղաբ տանում, թէ փռնշուն հարցրէց, ասում էր. «Ինչ վօր հրամայէլ էր՝ արէլ էմ»: Ասում ա, յէ՛դ գալի, էթում դուքանը բա՛ց անում, իրա առուտուրին, իրա բանին կէնում:

Բէզրգյանը վօր տէնում ա տղէն սաղ-սալամաթ յէ՛դ էկաւ, ալրիալը մատը կծում ա. «Բա՛լի, — ասում ա, — կա չկա՛՝ ըստէ մի բան կա»: Վէր ա կէնում գալի փռնշու կուշտը:

— Փռնշի՛, — ասում ա Բէզրգյանը, — էդ ո՞ւմն էս կօխէ փուռը:

— Ա՛ղա,— ասում ա փռնչին,— դո՛ւ շատեցիր. «էն գլխէն օվ կգա կուշտդ, ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէ՛նց կասի՛ վէ կռնէս կկօխէս փռու-
առա: էն գլխէն կնիկդ էկավ, վօնց վօր ասէլ իր՝ ընէնց հարցրէց,
յէս էլ անսաս վէ կալա քցէցի թէժ փռուր:

— Այ հարա՛յ,— ձէն ա տալի բէղրգյանը,— քու տո՛ւնը քանդ-
վի, վօնց վօր դու իմ տունը քանդէցիր, թողիր:

Խէղճը շատ ա գլխին վա՛յ տալի, լա՛ց ըլնում, համա էլ ո՛ւր,
բանը բանից ա՛նց էր կացէ: Թո՛ղում ա փօր-փօշման, դառը-տխուր
գալի տուն:

Իրիգունը տղէն դուքանիցը դալիս ա:

— Տղա՛,— ասում ա բէղրգյանը,— քեզ մի բան պտի հարց-
նէմ, համա վօր դրուստը չէս ասէ՛ էլ ձէռիցս չէ՛ս պրծնի:

— Ա՛սա,— ասում ա տղէն,— կա՛սէմ, խի՛ չէմ ասի:

— Դու ա՛րի դրուստն ասա՛ քու ու կնկանս արանքը ի՛նչ ա
անցկացէ:

Տղէն առողջ չէմ ու շում արէց, չո՛ւզէց մղուր գա, ասէց բալի
իղակօրուստ անի, համա տէհավ վօր չէ՛, բանը ո՛ւրիշ թավուր ա,
բէղրգյանը ամէն բան գիտա, էլ չկարաց պահի. ասէց՝ հա՛լ-նաղլ
ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէնց բա՛ն, նստէց մին-մին նա՛ղլ արէց, վօնց վօր
յէս ձէզ նա՛ղլ արի:

— Լա՛վ,— ասէց բէղրգյանը,— յէս քեզ ավատում էմ. համա
վօր դու իմ կնկա կօրչէլու սաքաքն էլար, սրանից դէնը քու աշխա-
տանքն ինձ հա՛րամ ա կացէ, վօր վօտիցդ ընշանք գլուխ վօ՛սկի էլ
դառնաս՝ ինձ պէտքը չէս: Հրէ՛ս,— ասէց,— էս քու սաղ տարվա
թամամ հախը. ապրանքից էլ ինչ վօր քեզ կհասնի, կէթաս վէ՛ կու-
նէս, կէթաս յէդ քու յերկիրը: Աստօծ քէ՛զ բարի տա, ընձ էլ:

— Լա՛վ,— ասէց տղէն,— վօր ուղում էս՝ ըստէ՛նց կանէմ:

Հա՛ց կէրան պրծա՛ն, պառկեցին, քնեցին: Առավօտը լիսը բա՛ց-
վէց թէ չէ, տղէն վէ՛ կացավ, գնաց դուքան, դուռը բա՛ց արէց, ապ-
րանքից ինչ վօր իրան կհասնէր, չօրսից մինը վէ՛ կալավ, էլ յէդ
դուռը շի՛նէց, բէրէց բալանիքը տվէց բէղրգյանին, հէննէն մնաս
բա՛րօվ արէց, էկավ քրէհդա՛րնէր բռնէց, ապրանքը բա՛րցիլ տվէց,
ընգավ ճամփա՝ դո՛ւզ դպա իրանց գէղը:

է՛կավ, է՛կավ, է՛կավ, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր,
է՛րկու օր, ի՛րէք օր, հի՛նգ օր, մախլասի, մի՛ շափաթ, է՛րկու շա-
փաթ՝ հէնց էն ա հասվէհաս էր, գէղի կշտին մութը գէտինը կօխէց:

— Քրէհաւ'րնէր,— ասէց տղէն,— բէռնէրը վէ՛ դրէք, ըստէ լա-
դիր տանք, կէ՛նանք ընշանք լիսանա, նօր վէ՛ կէնանք ճամփա
ընգնէնք:

— Տնա՛շէն,— ասէցին քրէհաւրնէրը,— էլ ըստէ ի՞նչ կա, վօր
կէնանք, հրէ՛նիկ գէղն էրէվում ա:

— Չէ՛ վօր չէ,— ասէց տղէն,— հէրս վասիաթ ա արէ, վօր քշէ-
րը ճա՛մփա չէթամ:

Ինչ ա՛րին լա՛րին՝ չէ՛լավ, տղէն մի հէտ սատանի ձին նի՛ էր
էլէ, չէ՛ր ուղում վէ դա: Դէ՛ նրանք էլ ի՛նչ պտի ասէին. բէրին բէռ-
նէրը վէ՛ դրին, լա՛դիր տվին, կացան: Քշէրվա մի վախտ տղէն վէ՛
կացավ, ասէց. «Տէնամ քրէհաւրնէրը քնէ՛լ էն, թէ չէ, հօ գօղ, հա-
րամի չկա՞»: Բէռնէրի շօրս բօլօրը մա՛ն էկավ, է՛ս դիհը գնաց, է՛ն
դիհը գնաց՝ մըն էլ տէհավ՝ հրէնիկ գէղիցը մի մարթ՝ ֆանառը ձէ՛-
ռին, մի դադ ուսին կրընկում ա դպա գէրէղմաննէրը: Ասէց. «Ա՛րի
բուսուն պահէմ, տէնամ էդ մարթը էս բէվախտին ո՛ւր ա էթում:
Սատանական ընէ՛նց էլ զուում մթնաքշէր էր, ընէ՛նց զուում մըթ-
նաքշէր, վօր մատդ մարթի աչք կօխէիր՝ չէ՛ր իմանա: Տէհավ՝ էդ
մարթն է՛կավ, է՛կավ՝ հասավ գէրէղմաննէրը. ըտէ դէ՛ս ընգավ,
դէն ընգավ, մի քար գտավ. էդ քարը բանձրացրէց, բահօվ տակը
փօ՛րեց, ուսի դադը վէ՛ դրէց, ընդէ ֆօ՛րէց, քարն էլլէդ ուսուլօվ
քցէց վրէ՛ն, թօղաց, գէղի ճամփէն բռնէց գնաց:

Տղէն էս վօր տէ՛հավ, ուրախացավ՝ աշխարօվ մին էլավ: Խէղ-
ճը հէնց գիտար՝ էն մարթը խաղի՛նա յա տ՛պրանք բէրէց, էն քարի
տակին ֆօրէց. ասէց. «Կէթամ կհա՛նէմ, կհարստա՛նամ, մալ ու
դօլվաթի տէր կըլնէմ»: Լա՛վ: Դէ՛ս մտիկ տվէց, դէ՛ն մտիկ տվէց,
տէհավ՝ քրէհաւրնէրը ընէ՛նց խոմփալէն քնած էն, վօր վօննէրիցը
բռնէիր դէն քցէիր՝ չի՛ն իմանա: Նրանց թօղաց ընդէ քնած, ինքը
ֆանառը վա՛ռէց, յավաշ-յավաշ յէրըմիշ էլավ դպա գէրէղմաննէ-
րը, դէ՛ս ման էկավ, դէ՛ն ման էկավ՝ էն քարը գտավ, ուսուլօվ բանձ-
րացրէց, տակը մխէլի տէղ քա՛նդէց, ընդէ պահած զադը հա՛նէց,
դրէց ուսին, բէրէց շադիրը: Բաց արէց, ի՛նչ տէնա՝ մի սի՛րուն,
նա՛շխուն, հուրի-մալաք ա՛խչիկ, թաքավօրի ախչկանը լալէղ շօրէր
հաքին, յարալու արած, արէնշաղաղ խանշալն էլ կօխքին դրած:
Ձէռը դրէց սրտին, տէհավ ըհ՛ը՛, սիրտը քցում ա:

— Բաս լա՛վ ա,— ասէց,— դէռ հլա սաղ ա. թէզօվ սրան մի
ճա՛ր անէմ:

Առավօտը լիսը բացվէց թէ չէ, քրէհարներին ասէց, վօր էլ չէ-
թան գէղը, ձիանիքը ուրիշ տէղ քշէն:

Դէ՛, քրէհարներն է՛րին ինչ, նրանք իրանց քրէհի վէթիւն ին, ձիա-
նիքը բարցէցին, ընկան ճամփա:

է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիշն աստօծ գիտա, մի՛ օր, է՛ր-
կու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ՝ էկան հասան Գյումրի:
Էստէ տղէն իրա ապրանքը քօմմա ծախօ՛տէց, փօ՛ղ շինէց, քրէհ-
դարների հախը տվէց, ճա՛մփա դրէց, ջօկ օ՛թախ քրէհէց, կա՛ցաւ,
յէննա Գյումրու մհալումը ինչքամ գլուպ հէթիմ կար՝ քօմմըքին էլ
կա՛նչէց. «ի՛նչ ուղէք՝ կտամ,— ասէց,— թաքիլան էս ախշկանը մի
ճա՛ր անէք»:

էս հէթիմներն ին՝ խէ՛լք խէլքի տվին, է՛ս գէղը տվին. է՛ն գէղը
տվին, հա՛յ դէս, հա՛յ դէն, քշէր-ցէրէկ շարշարվցին՝ մի՛ ամիս,
է՛րկու ամիս, ի՛րէք ամիս, կամաց-կամաց հիվանդը լավացաւ, վէ
կացաւ, ման էկաւ, էլաւ վօնց վօր մօրէն մին: Հէթիմներին բօլ
փօ՛ղ տվէց, ճա՛մփու դրէց, գնացին: Ընշանք օրս տղէն չէր գիտա՝
էս ախշիկն օ՛վ ա, օ՛վ չի, հէրնըմէր ո՛ւնի, չո՛ւնի, յա վօ՛նց ա էլէ,
վօր սրան յարալու էն արէ, բէրէ էն գէրէզմանաքարի տակը դրէ,
թօղէ գնացէ: Վօր լավ լավացաւ պրծաւ, նօր ախշկանը հարց ու
փօրց արէց: Ախշիկը նստէց մին-մին, տէղը-տէղին նա՛ղլ արէց
իրա գլխօվ անցկացածը:

— Յէ՛ս,— ասէց,— թաքավօրի ա՛խշիկն էմ: Հէրս մի սառաֆ ու-
ներ,— ասէց,— դրա տղի աչքն ընկէլ էր վրէս, ուզում էր ինձ առնի: Էդ
սառաֆի տղէն ա՛, դէ՛ս ընգաւ, դէ՛ն ընգաւ, մա՛րթիկ մեչ քցեց, ինչ
ա՛րէց, շա՛րէց՝ չ՛էլաւ, հէրս դա՛րու չէլաւ, նա մի հէտ չէ՛ եր ասէ՛ էն
դիհը կաննէ: Էդ օրվանից սառաֆի տղէն հէննէս ի՛նադ ընգաւ: Օրէն
մի օրը, իմ դարավաշների հէննա գնացէլ ի գէղիցը դուս սէհր անէլու:
Հէնց գէղիցը մխէլի հէոացէլ ինք, մըն էլ է՛ն տէհանք՝ մի քանի ձիա-
վօր էն դհիցը դուս էկան, ձիանօնց գլուխը բրա՛խ տվին ու յա՛լլա՝
դպա մէզ: Էս վօր տէհան դարավաշներս, վախլություններիցը թօ՛-
դին փախան, յէս մնացի մէն-մէնակ: Էդ ձիավօրներն էկան հա՛սան,
տէհա՝ դրանցից միներ էն սառաֆի տղէն: Զիանօնցից վէ՛ր էկան, ձէո
ու վօտս կա՛պէցին, վէ՛ կալան տարան: Յէս ուշա՛թափ էլա, մնա-
ցի. էլ միտս չի՛ ո՛ւր տարան, ի՛նչ արին, ի՛նչ շարին. մէնակ է՛ս ա
միտս, վօր աչքս բա՛ց արի՝ տէհա կշտիդ:

— Ղո՛րթ էս ասում, ա՛խշի, թէ սուտ,— հարցրէց տղէն:

— Ղօ՛րթ:

— Ղօ՛րթ:

— Ղօ՛րթ:

— Բա՛ս վօր ըտէ՛նց ա,— ասէց տղէն,— դու ի՛մն էս, յէս՝
քո՛ւնը:

Գնաց էն սհաթը տէրտէր կանչէց, էդ տէրտէրը բէրէց դրանց
պսա՛կէց, էլան մարթ ու կնիկ: Ըստէ մի քանի վախտ կա՛ցան, յէն-
նա միտք արին, ասէցին՝ վէ՛ կէնանք էթանք մէր քաղաքը, տէնանք
ի՛նչ կա, ի՛նչ չկա: Համա կնկա միտքն ո՛ւրիշ էր, նա ուզում էր սա-
ռաֆի տղից ինազը հանի, նօ՛ր վօր սիրտը հօվանար: Ճամփի թա-
ղա՛րէք տէհան, ինչ ունէին-չունէին կապօտէ՛ցին, ընկան ճամփա
դալա իրանց քաղաքը:

է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աստօծ՝ գիտա, մի՛ օր, է՛ր-
կու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ՝ հասան իրանց քաղաքը:
Ըտէ ախլկա հօրնըմօրիցը թաքուն ջօկ օ՛թախ քրէհէցին, կա՛ցան:
Անցկացա՛վ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, տղի ձէռի փօղը հատա՛վ,
չէր իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ չանի, ո՛ւմ դուռն էթա, ո՛ւմ ձէռը դէմ
անի, մի քանի շահի ուղի, վօր սթա՛ր անի, ընչանք տէնան՝ վէրջ-
նէրն ի՛նչ ա ըլնում: Ըսէնց օրէն մի օրը տղէն դառը-տխուր նստէլ
էր, մտքի հէննա ընկէ:

— Ա՛յ մարթ,— ասէց թաքավօրի ախլիկը,— ի՛նչ էս միտք ա-
նում, ասա տէնամ դարդդ ի՛նչ ա. խի՞ էս ըտէնց դառը-տխուր նըս-
տէ, չըլնի՞ ձէռիդ խարչըղը պրծէլ ա, ընդուր հմար էս միտք անում:

— Հա՛,— ասէց,— ա՛յ կնիկ, քէզանից պահէմ, ասսանից ի՛նչ
պահէմ, լափ սըթար-մըթարից ընկէլ էմ, վօնչ փօ՛ղ կա, վօնչ զա՛դ:
միտք էմ անում, թէ մէր վէրչն ի՛նչ պտի ըլնի:

Թաքավօրի ախլիկը էս վօր լսէց, էն սհաթը ձէռը տա՛րա՛վ, մա-
զէրի միշիցը մի ա՛կը հանէց, տվէց նրան:

— Ա՛ռ,— ասէց,— էս ակը, կտանէս բազար, կտաս թաքավօրի
սառաֆի տղին. ի՛նչ աժի,— կհարցնէս: Կասի. «Հա՛ղար էրկու հա-
րիր մանէթ»:— Բաս վօր ըտէ՛նց ա,— կասէս,— վէց հարիր մանէթ
տո՛ւ, էն վէց հարիրն էլ քէզ փէ՛շքաշ: Սա՛վայի էս,— ասէց,— բան
ա, վօր սառաֆի տղէն քէզ կանչի, ասի. «էթանք մէր տունը ղօնաղ»,
կէ՛թաս, համա ընէ՛նց կանէս, վօր հէքսի օրն էլ դո՛ւ նրան բէրէս
մէր տունը: Իմա՛ցար:

— Իմացա, — ասէց տղէն, — վօնց վօր ասէցիր՝ ընէնց էլ
պանէմ:

Ակը ձէռիցն ա՛ռաւ, վէ՛ կացաւ զնաց բազար: Դէ՛, շօրը-մօրը
փօխել էր, ուրիշ գէյմ մտէ, վօր ասէս՝ մարթ էլա շճանանչեց նրան,
թէ օ՛վ ա, օ՛վ չի: Տարաւ դո՛ւղ թաքավօրի սառաֆի տղի կուշտը,
ակը հանէց շանց տվէց:

— էս ակն ի՞նչ ածի, — հարցրէց:

— Հա՛ղար էրկու հարիր մանէթ, — ասէց սառաֆի տղէն:

— Բաս վօր ըտէ՛նց ա, — ասէց, — վէց հարիր մանէթ տո՛ւ, վէց
հարիրն էլ քէղ փէ՛շքաշ, Ռա՛ղի էս:

— Ռա՛ղի էմ, — ասէց սառաֆի տղէն:

էն սհաթը ուրախ-ուրախ հա՛նեց, վէց հարիր մանէթը նաղդ
համբրէ՛ց, ակը ձէռիցն ա՛ռաւ, դէռ հլա իրա միջին էլ ծիծաղաց նրա
վրէն, թէ էս մարթը գի՛ծ ա, ի՛նչ ա, վօր էս թավուր գոզաւ ակը բէ-
րէլ ա, կիսագին ծախում:

Իրիգունը վօր էկաւ տուն, հօրը մին-մին նաղլ արէց. — Բա չէ՛ս
ասի, — ասէց, — ա՛յ հէր, ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէ՛նց բան, ըսօր մի տղա
բերէց հաղար էրկու հարիր մանէթանօց ակը վէց հարըրօվ ծա՛խէց,
յէս էլ առա, թողաց, զնաց:

— Ա՛յ վօրթի, — ասէց հէրը, — բա խի՞ չիր էն տղին կանչում,
բերում տուն, վօր լաւ պատիւ տալինը, ընէ՛նց ճամփու զնէինը:
Վօ՛րթի դէռ հլա ջա՛հէլ էս, չէ՛ս իմանում, վօր էդ թավուրներից
մարթ, տէղն ընկած վախտը, շա՛տ խէր կտէնա:

— Լա՛վ, ա՛յ հէր, — ասէց, — վօր մըն էլ ռաստ գա՛ կբէրէմ:

Անց ա կէնում մի քանի վախտ, օրէն մի օրը, թաքավօրի ախ-
չիկը տղին էլի դրկում ա բաղար, ասում ա. «է՛ս առ, է՛ն առ, է՛ս
բէ, է՛ն բէ», մախլաս, ինչ վօր պէտքն էր՝ փօղ ա տալի, վօր էթա
ա՛ռնի: էս տղէ՛ն ա՛ գէյմը փօ՛խում ա, դուս գալի, էթում բաղար:
Դէ՛ս ա ման գալի, դէ՛ն ա ման գալի, ինչ վօր կնիկը թա՛մբահ էր
արէ՛ ա՛ռնում ա, թողում գալի տուն: Ծամփին սառաֆի տղէն սրան
ռաստ ա գալի:

— Ա՛յ բարօ՛վ, հաղա՛ր բարին, — ասում ա սառաֆի տղէն, —
քէ՛ֆդ, հա՛ղդ, վօ՛նց էս, լա՛վ էս:

— Փա՛ռք իրա օղօրմությունին, — ասում ա, — կա՛նք էլի:

— Ինչ կըլնի՛ կըլնի, — ասում ա սառաֆի տղէն, — ա՛րի ըսօր
էթանք մէր տունը ղօնաղ. շատ վախտ ա իրար չէնք տէհէ, դէ՛սից,

դէ'նից կա'սէնք, կիսո'սանք, զրի'ց կանէնք, ընչանք օր ա, կմըթ-
նի է'լի:

— Լա'վ, — ասում ա, — սառաֆի տղա, ըսօր վօր յէս ձէր տունը
գամ, խօսք տա'լիս էս, էքուց էլ դո'ւ գաս մէր տունը:

— Խօսք էմ տալի, — ասում ա սառաֆի տղէն:

— Դրո'ւտ:

— Դրո'ւտ:

— Բաս վօր ըտէ'նց ա, է'թանք:

Վէր ա կէնում գալի Թաքավօրի սառաֆի տունը: Գալիս էն
տուն, նստո'ւմ էն, դէ'սից, դէ'նից ա'սում, խօ'սում, մասլահա'թ
անում, ընչանք հացի վախտը գա'լիս ա, բէրում էն դաստախունը
րա'ց անում՝ նստում էն հացի: Սառաֆի տղէն իրա ղօնաղին լավ
քէ'ֆ, ուրախությո'ւն ա շանց տալի: Ո'ւտում էն, խմո'ւմ, լավ լըլ-
վո'ւմ, թռչվո'ւմ, ընէնց վօր լա'վ հալից ընգնում էն: Դէ', տղէն էդ
հալին էլ հօ շէր կարա վէ կէնա, էթա իրանց տունը, հէնց ըտէ քշէրը
մնում ա:

Մնում ա, առավօտը վէ' կէնում, սառաֆի տղին ասում. — Սա'
ռաֆի տղա, հմի' ինչ էս ասում. գա'լիս էս մէր տունը ղօնաղ,
թէ չէ':

— Գա'լիս էմ, — ասում ա սառաֆի տղէն, — է'թանք:

Վէ'ր էն կէնում գալի:

Գալիս էն տուն: Թաքավօրի ախշիկը սառաֆի տղին տէնալու
բաշտան՝ ալրիա'լը ճանանչում ա, էթում ա տափ կէնում, ասում ա.
«Վա'յ թէ ինձ տէնա, րա'ն ֆահմի՞մ: Էդ էրկսով նստո'ւմ էն, ա'սում,
խօ'սում, մասլահա'թ անում, ընչանք էդ վախտը Թաքավօրի ախ-
շիկը կէրա'կուր ա էփում, հաց-մա'ց շինում, հաղի'ր անում: Տղէն
տանում ա դաստախունը փոռ'ւմ, կէրակուր ածում, բէրում դնում
իրանց աղաքը. նստո'ւմ էն, ո'ւտում, խմո'ւմ, քէ'ֆ անում, ջա'ն
ասում, ջա'ն լսում ընչանք կէս քշէր: Սրանք վօր շատ խմում էն,
գինօվանում, հէնց տէղնուտէղը թէք էն ընգնում, քնում: Դէ' հօ գի-
նօվը՝ հօ մէռէլը՝ մի'ն ա, վօր վօտիցը բռնէս, քաշ տաս՝ չի' իմանա:
Սրա'նք էլ ըտէնց:

Քշէրվա մի վախտ Թաքավօրի ախշիկը վէր ա կէնում, էն ար-
նօտ խանչալը վէ'ր ունում, վօր խանչալօվ վօր իրան լաքա'լու ին
արէ, ուսուօվ էթում սառաֆի տղի գլխավիւրէվը կա'ննում: Տէնում
ա խըռըմփալէն քնած ա. խանչալը վօր չի' կօխում փօրը, մի քանի-

հէտ էլ պտիտ տալի, աղիք-մաղիքը խառնըշտօրում, ալրիա՛լը ֆօ-
քին տալիս ա: Նօր մարթին բռթո՛ւմ ա, վէ կացնում: Մարթը վէ՛ր
ա կէնում տէնում ի՛նչ՝ սառաֆի տղի մէյիդը կողքին է՛րգէն մէկնը-
վէլ ա, աղիք-մաղիքը դուս թափած, արնի միշին կօրած:

— Ա՛յ կնիկ, — ասում ա, — էս ի՛նչ զուլում բէրիր մէր գլուխը.
հմի հօ մէնք ֆօղէց-ֆօքի կօ՛րանք:

— Բան չկա, — ասում ա կնիկը, — դրան տէ՛ղն ա. յէս հօ ինա-
դըս հանէցի, սրանից դէնը ի՛նչ ուղում ա ընի: Մի շօրի միշի էդ
օլուն կփաթաթէ՛ս, — ասում ա, — կտանէս գէրէզմա՛նները, մա՛ն
կգաս, էն գէրէզմանաքարը կքթնէ՛ս, վօրդէ ինձ բէրէլ ին ֆօրէ, տա-
կը լաժ կքա՛նդէս, կդնէս ընդէ՛, ֆօղը վրա՛ կտաս, քարը էլյէդ
կքցէս վրէ՛ն, կթօղաս կգաս:

Մարթն էլ տէնում ա, վօր ճար, իլլաջ չկա, կնկա ասածը պտի
անի, բէ՛րում ա էդ օլուն մի շօրի միշի փաթթո՛ւմ, դնում ուսի՛ն,
տանում գէրէզմա՛նները, դէ՛ս, դէ՛ն ընգնում, մա՛ն գալի, էն քարը
գտնո՛ւմ, բանծրացնո՛ւմ, տակը քա՛նդում, մէյիդը դնում ընդէ՛,
ֆօղը վրա՛ տալի, քարը էլ յէդ քցում վրէն, թօղում գալի տուն:

Առաւօտը լիսը բա՛ցվում ա թէ չէ, կնիկն ասում ա մարթին. —
Ա՛յ մարթ, սրանից դէնը ըստէրանք մնալը հա՛րամ ա. պտի գլուխ
առնէնք էթանք ուրիշ յէրգիր, թէ չէ վօր իմացան, բանը բացվէց,
վա՛յն էկէլ ա մէդ տարէ: Կէթաս, — ասում ա, — ինձ հմար մի ձէռք
տղամարթի շօր կառնէս, թո՛ւր, ա՛սպար ու մի հատ էլ լաժ քյահլան
ծի, մախլաս, ճամփի հմար ի՛նչ պէտքն ա կա՛ռնէս, վէ կէնանք
էթանք Ստամբօլ, ընդէ կէ՛նանք, ընչանք տէնանք վէրչնէրս ի՛նչ ա
ըլնում:

— Իա՛վ, ա՛յ կնիկ, — ասում ա մարթը, — թօղ ըտէ՛նց ընի,
էթամ ա՛ռնէմ:

էս մարթն ա՛ գէյմը փօ՛խում ա, վէ կէնում, էթում բա՛ղար,
դէ՛ս ա ման գալի, կնկա հմար մի լաժ ձէռք տղամարթի շօ՛ր ա առ-
նում, ասպար-մա՛սպար ա առնում, էրկու էլ քյահլան ձի, թօ՛ղում
գալի տուն: Էդ քշէր ըտէ մնո՛ւմ էն, ճամփի թաղա՛րէք տէնում, ինչ
ոռնէին-չոռնէին, բէրում հաղի՛ր անում, առաւօտը, դէռ լիսն ու մութը
չբաժանված, մարթ ու կնիկ վէ՛ր էն կէնում, թաքավօրի ախլիկը
տղամարթի գէյմ ա մննում, ասպարաժօ՛րվում էն, ասսու անումը
տա՛լի, թռնում ձիանիքը՝ յա՛լլա:

է՛թում էն, է՛թում էն, է՛թում էն, շատն ու քիչն աստօծ գիտա,

մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, գալիս էն մի շալիր-շիման տէղ, մի ախարի կշտի վէ՛ գալի՛ մի քիչ դինջա՛նան, հաց-մա՛ց ուտէն, էլ յէդ վէ՛ կէնան, էթան իրանց ճամփէն: Թաքավորի աղչկա վրէն հօ էլ հա՛լ շէր մնացէ՛ բեղա՛րէլ էր, թըլըպպէ, մնացէ: Ախար խէղճը աղիգ-մազիղ մէնձա՛ցած, արէլի էրէս շտէ՛հած՝ կա՛րար իրէք օր իրար վրա ճա՛մփա էթա, ըն էլ ձի՛օվ: Հաց վօր կերան պրծան, զուխը դրէց տղի ծնգանը, ասէց. «Մի քիչ աշքս էլա կպցնէմ, դինջանամ»: Տղէն տէհաւ, վօր քնէց, ինքն էլ իրա դարդի հէննա էլաւ:

«Հըրէ՛ս,— ասէց ինքն իրան,— ձէռնէրիս փօղը պրծնում աւրանից դէնը ի՛նչ պտի անէնք, ո՛ւմ դուռն էթանք, ո՛ւմ ձէռը մէկնէնք, մի կտօր հաց ուղէնք: Կնիկս,— ասէց,— էն դօնում վօր մի աղը տվէց, տանէմ խարշէմ՝ իրա մաղէրի մի՛ շիցը հանէց, ա՛րի մի ման գամ, տէնամ նրանից է՛լ կա, թէ հէնց է՛ն էր, վօր տվէց»: Ա՛ն-կաջ դրէց, տէհաւ՝ խըռըմփալէն քնած ա. ուսուով ձէռը տարաւ մաղէրը, դէ՛ս քրքրէց, դէ՛ն քրքրէց, մըն էլ ի՛նչ տէնա՝ մի կարմիր մահդի կտօր, վրէն օխտ-ութ աղը շաքօտած, ընէնց էլ մի շօղշօ՛ղում ին, ֆըրֆուհա՛ր գալի, վօր քիչ էր մնում մարթի աշք քօռացնէին. թօղալին: Էս վօր տէհաւ՝ նօ՛ր մի քիչ խէղճի սիրտը արխէյնացաւ, տէ՛ղն ընգաւ: Քրտնած մատնէրով վօր բռնէլ էր, ակնէրը մի քիչ սէվացել ին. ասէց. «Դնէմ ա՛րէվը, շօրա՛նա, յէդ վէ՛ր ունէմ, պահէմ»: Մահդի կտօրը վէ՛ կալաւ, դրէց արևու Վօրդիան վօր էր, էն դհիցը մի ագոավ վէր էկաւ, հալրաթ իմացաւ միս ա, մահդի կտօրը կտցէց՝ թռաւ: Տղէն ընդաւ յէննուցը. «Թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա թըռ», համա էլ ո՛ւր տա՛րաւ ու տարաւ: Շա՛տ գըլխին վալ տվէց, լա՛ց էլաւ՝ համա էլ ի՛նչ, բանը բանից անց էրկացէ: Մնացել էր շիվարած, շէր իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ չանի, ի՛նչ էրէսով կնկա էրէսին էրէվա: Միտք արէց, միտք արէց, վէրջն ասէց. «Լաւն էն ա գըլխս վէր ունէմ, էթամ մի դհով, աշխա՛տանք անէմ, մի քանի շա՛հի հաւաքէմ, նօ՛ր ընդիան տամ, էթամ Ստամբօլը: Չունքի գիտար, յէդ ու աղաք թաքավորի ախլիկն էլ կգար Ստամբօլ, ասէց. «Ընդէ իրար կքթնէնք»: Ըտէ՛նց էլ արէց, ուսուով կնկա գըլխը վէ՛ կալաւ ծնգան վրիցը, դրէց գէննին, բէրէց ձին թա՛մբէց, նի էլաւ՝ յա՛լա:

Դնա՛ց, գնա՛ց, գնա՛ց, շատ գնաց, թէ քիչ՝ աստօծ ա խաբար, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ, լի՛ս գնաց, մո՛ւթ գնաց՝ դուս էկաւ Թիֆլիսա շհարը: Ըստէ իրա ձին, ասպաքնէրը

քօմմա ծախսօտէց, փօղ շինէց, վօր նրանօվ մի քանի օր սթա՛ր անի՝ ընշանք մի բանի կպնիլը: Դէ՛ս ընգավ, դէ՛ն ընգավ, սրա՛ն հարցրէց, նրա՛ն հարցրէց, վէրը մի հարուստ մարթի ռաստ էկավ:

— Ա՛խպէր,— հարցրէց էդ հարուստ մարթը,— կատէպան չէ՛ս ըլնի:

— Խի՛ չէմ ըլնի, ա՛ղա,— ասէց տղէն,— զաթի յէս էլ գէղցի, ռանչպար մարթ, հէնց էդ իմ սիրած փէ՛շակն ա:— Իրար հէննա խօսա՛ցին, պրծան, բարը շէցին՝ տարէկան յեռէսուն մանէթ, վրէն էլ մի ձէռք շօր:

Էս մէր կատէպանն ա՝ Թիֆլիսա շհարումը մնո՛ւմ ա, էդ հարուստ մարթի հիքին բէշա՛րում, մո՛ւղաթ կէնում, իրա վախտին ջրո՛ւմ, քախանո՛ւմ, է՛տում, Թա՛ղում, յէ՛դ տալի, մախլաս, զլխնէրդ ի՛նչ ցալացնէմ, հիքումն ինչ շարչա՛րվում էր, շարչարվում, իրի-գունը գալիս էր՝ նրանց տան բա՛նին հասնում, աղաքնէրին ղո՛ւլլուտ անում, է՛ս անում, է՛ն անում, ընէնց վօր քօմմըքօվ էլ նրան ընէ՛նց ին սիրում, ընէ՛նց ուղում, վօնց վօր մի տան տղա: Ըսէնց մի քանի տարի կացավ դրանց կշտին, մի քանի մանէթ փօղ շինէց, վէրը մի՛տք արէց, ասէց. «է՛թամ կնկանս հալարին, աշխարէ-աշխար, յերգրէ-յերգիր ման գամ, բալի գտնէմ»: Էդ հարուստ մարթը շա՛տ կպավ յախէն, Թէ. «Մի տարի էլ կաց, մի՛ էթա», չէ՛լավ, ասէց. «Չէ՛մ կարա, վօր չէմ կարա, մուրազ ունէմ, պտի է՛թամ»: Դէ աղէն էլ ի՛նչ պտի ասէր, տէհավ՝ չի՛ ընում, չի՛ ուղում, բէրէց նրա փօղը տվէ՛ց, մի ձէռք էլ լավ շօ՛ր առավ, հաքցրէ՛ց, ճա՛մփու դրէց:

Կատէպանը հէնց նօ՛ր էր վօտը շէմքիցը դուս դրէ, աղէն յէն-նուցը ձէն տվէց.— Տղա,— ասէց,— մտիցս ընգէլ էր՝ մէր հիքումը մի շօր բարդի կա, մի է՛թաս, կտրէս, կօտօ՛րէս, ցա՛խ անէս, լցնէս սէ՛լը, բէրէս տո՛ւն, յէննա է՛թում էս՝ գնա, աստօծ քէզ հէննա:

— Ա՛շքիս վրէն, ա՛ղա,— ասէց կատէպանը,— ըստէ ի՛նչ կա, որ քու խաթրը կօտրէմ. ըսօր չէմ էթա, է՛քուց կէթամ, մին չի՛:

Էն սհաթը յէ՛դ դառավ, էկավ տո՛ւն, սէլը լծէ՛ց, կացինը քցէց վրէ՛ն, քէց դո՛ւղ դպա հիքին: Էկավ հիքին, կացինը վէ՛ կալավ, գնաց աղի ասած բարդին կտրէ՛ց, կօտօ՛րէց, բարցէց սէ՛լը, յէննա ուղում էր ծառի խուրովսուշը կիտի, տէհավ, ըհը՛, ագռավի տարած մահդի կտօրը՝ ակնէրը քօմմա վրէն՝ էդ խուրովսուշի միշին: Դու մի՛ ասի, էն ագռավի բունը էն բարդու ծէ՛րին ա էլէ. մահդի կտօրը վօր կտցէլ ա, բէրէլ ա դո՛ւղ իրա բունը:

«Փա՛ռքդ շատ ըլնի,— ասէց,— ա՛ստօժ, վօր իմ մալը էլ յէդ ի՛նձ դամաթ արիր. էս հէտ պարզէրէս կէթամ կնկանս կուշտը»:

Ակնէրը շօրի միշին դայիմ փաթթէց, դրէց շէրը: Բէրէց սէլը լծէ՛ց, քաշէց էկամ ցախը տանը դարտկէ՛ց, քշէրն էլ ընդէ կա՛ցամ, նօր էն մի օրը առաւօտը սուրփի ծէքի հէննա վէ՛ կտցամ, ուրախ- ուրախ ճամփա ընկամ դպա Ստամբուլ:

Սրան թողանք է՛թա, գանք խաբար տանք թաքավօրի ախլիանիցը:

Թաքավօրի ախլիկն ա՛ վօր մի վախտ աչքը բաց ա անում տէնում՝ մարթ-մադաթ չկա, մարթի ձին էլ ընդէ չի՛ նստում ա, ուքուր- ուքուր լա՛ց ըլնում: Զէնը տանում ա մազէրը, տէնում խճճված ու ակնէրն էլ միշին չի:

«Հէ՛յ դիտի թամահքյար մարթ,— ասում ա,— քնած վախտս ա կնէրը հա՛նէլ ա, գլո՛վս Կոնէ, փա՛խէ: Փա՛ռք քէզ,— ասէց,— ա՛ստօժ, փա՛ռք քու օղորմությունին»:

Խէղճը կէ՛նում ա, կէ՛նում, ասում ա. «Օ՛վ դիտի, բալի մարթս գալիս ա»: Կէնում ա մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, ի՛րէք սհաթ, մախլասի, էնքամ կէնում ա, վօր մութը գէտինը կօխում ա, տէնում ա վօնչ մա՛րթ կա, վօնչ դա՛դ, նօր վէ՛ր ա կէնում դառը-տխուր ձին նի՛ւնում, ընգնում ճամփա: Գա՛լիս ա, գալի, շատն ու քիչն աստօժ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շափաթ, մախլասի՛ մի ամիս, քշէր, ցէրէկ գալիս ա, հասնում ա Ստամբուլա շհարը: Զէնին էլի շատից-քից փօ՛ղ ա մնացած ըլնում, բէ՛րում ա ըստէ էդ փօղօվը մի փո՛ւ ա բաց անում, հա՛ց ծախում. սավայի էդ՝ մի հատ էլ զարըբա՛նօց ա շինիլ տալի, վօր շհարումը ինչքամ քյասիբ-քյուսուր, դարիբ մա՛րթ ըլնի, դա ըտէ սթա՛ր անի. «Բա՛լի,— ասում ա,— ըսէնցությունօվ կարէնամ մարթիս քթնի»:

Ըսէնց մէր կատէպան էլ, վօր մի քանի տարուց յէդը վօտը դնում ա Ստամբուլա շհարը, էթում ա սրա՛ն, նրա՛ն հարցնում, թէ.— էն թավուր էժան քարվանսարա, դադ չէ՞ք գիտա, էթամ վէ գամ:

— Հրէ՛նիկ Ֆլան տէղն,— ասում էն,— Ֆլա՛ն մարթը զարըբա- նօց ա շինէ, քյասիբ-քյուսուր, դարիբ մարթիկ է՛թում, ընդէ կէ՛նում էն, վօնչ փօ՛ղ էն տալի, վօ՛նչ դա՛դ. ուզում էս՛ դո՛ւ էլ գնա:

Զաթի նա էլ էս թավուր բա՛նի էր ման գալի, ուրախ-ուրախ

«Է՛ր ա կէնում, է՛թում՝ հարցնէլօ՛ն, հարցնէլօ՛ն ման գալի, էդ դա-
րըբանօցը քթնում:

— Ղա՛րիբ էմ, ա՛նճար էմ,— ասում ա կատէպանը,— շի՛նի
մի տէղ տաք սթա՛ր անէմ:

— Խի՛ շիլնի,— ասում էն:— Բէրում էն սրան մի օ՛թախ տալի,
վօր կէնա:

Թաքավօրի ախշիկը տղին տէնալու բաշտան՝ ալբիա՛լը մատը
կծում ա: Ճիա՛լի,— ասում ա ինքն իրան,— էս նա՛ ա, վօր նա առ:
Համա ճանաչութոյն շի տալի. ասում ա. «Տէնամ՝ սրա վէրչն ի՛նչ
ա ըլնում»: Տղէն հօ՛ վօ՛ր ասէս շի ճանանչում կնկանը. հէնց իմա՛-
նում ա՝ դօրթմանց փռնշի ա:

Սրանց թօղանք ըստէ, գանք խաբարն ո՛ւմից տանք՝ սրանց
յէրգրի թաքավօրիցն ու նրա սառաֆիցը:

Խաբարը վօր բէրին թաքավօրին, թէ ախշկանդ փախցրին,
տարան, է՛ն սհաթը թաքավօրը ձիավօրնէր ղրգնց քամակնէրիցը,
վօր էթան կա՛լնէն, բէ՛րէն: Համա ընչանք գնալնէրը, նրանք իրանց
մանգղիւր կտրէլ ին: Ձիավօրնէրը դա՛ փ-դարտակ յէդ դառան,
է՛կան: Յէննա թաքավօրը թազադան մա՛րթիկ ղրգնց, իրա յէրգրումն
էլ տեղ չթօղացին՝ ման էկան, սա՛ր, քա՛ր, քօ՛լ վօննատակ տվին,
էլ մա՛րթ չթօղացին՝ հարցրին, ախշկանը չքթա՛ն, վօր չքթան:

Ըսէնց էլ թաքավօրի սառաֆը, խէղճը մէ՛րսով ման գալօն, շար-
շարվէլօն, դէ՛ս, դէ՛ն ընգնէլօն, սրա՛ն, նրա՛ն հարցնէլօն՝ վօնչ տղա
քթավ, վօնչ դադ. էն կօ՛րշիլն էր, վօր կօրավ՝ վօնչ ի՛զն էրէվաց,
վօնչ թօ՛ղը:

Անցկացավ ըսէնց մի՛ տարի, է՛րկու տարի, ի՛րէք տարի, մախ-
լասի, հինգ տարի: Թաքավօրը, վօր շատ դէ՛ս ընգավ, դէ՛ն ընգավ,
էլ տէղ չթօղաց մա՛ն էկավ, ախշկանը շկարաց քթնի, օրէն մի օրը
կանչէց իրա սառաֆին:

— Ա՛խպէր,— ասէց,— ըսէնց բան շիլնի. իմ ա՛խշիկն ա վօ-
տով-գլխով կօրէ, քու էլ՝ տղէն. կա՛ չկա, ըստէ մի բան կա: Ա՛րի,—
ասէց,— էրկսով էլ շօրնէրս փօ՛խէնք, ախքատի դէ՛յմ մննէնք, էթանք
աշխարէ-աշխար, յէրգրէ-յէրգիր մա՛ն գանք, բալի քթնէնք, բէրէնք:

— Լա՛վ էս ասում,— թաքավօրն ապրած կէնա,— ասէց սա-
ռաֆը,— է՛թանք:

Թաքավօրն ու սառաֆը խօսքնէրը մի՛ն արին, ախքատի շօրէր
հաքան, մի քանի տարվա ճամփի պաշար վէ կալան, ընկան ճամ-

փաւ, Դէ՛ս գնացին, դէ՛ն գնացին, է՛ս քաղաքը, է՛ն քաղաքը, է՛ս գէ-
ղը, է՛ն գէղը, էլ տէղ լթողացին, տակն ու վրա՝ արին՝ չթանաւ։ Վէրչն-
ասէցին. «էթանք Ստամբուլ շահարը, մի ընդէ՛ էլ սալըդ առնէնք,
տէնանք»։ Ճամփէքը ծռէցին դպա Ստամբուլ։ Է՛կան, է՛կան, է՛կան,
շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մի՛ շա-
փաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շափաթ, մախլասի, մի ամիս՝ հասան
Ստամբուլ։ Շըհարի մէջը վօր մտան, սրա՛ն, նրա՛ն հարցրին, թէ.
«Չէ՞ք գիտա էն թաւուր էժան քարվանսարա, դադ, էթանք վէ դանք»։

— Խի՛ չէնք գիտա,— ասէցին,— հրէն Ֆլա՛ն տէղը, Ֆլան մար-
թը դարըրա՛նօց ա շինէ. օ՛վ ասէս էթում ա վէ՛ գալի, վօնչ փօ՛ղ ա
տալի, վօնչ դա՛դ։

Թաքաւօրին ու սառաֆին ա՛ղաք էն անում, բէրում էդ դարը-
րանօցը։

— Ղա՛րիբ էնք,— ասում էն թաքաւօրն ու սառաֆը,— չի՛լնի
մի տէղ տաք, սթար անէնք։

— Խի՛ չիլնի,— ասում էն։— Բէրում էն սրանց մի օ՛թախ տա-
լի, վօր իրանց հմար կէնան։

Փռնչին թաքաւօրին ու սառաֆին տէնալու բաշտան՝ անրիա՛լը
ճանանչում ա. համա վօր ասէս ձէն-ծպտօն չի հանում, ասում ա.
«Տէնամ՝ սրա վէրչն ի՛նչ ա ըլնում»։

Թաքաւօրն ու սառաֆը, վօր ասէս, փռնչուն շճանանչէցին։ Դէ՛,
ախար, վօ՛րդիան վօրդէ. ո՛ւմ մտքօվը կանցկէնար, վօր թաքաւօրի
ախչիկը կգար Ստամբուլ, փռնչու գէ՛յմ կմննէր, դարըրա՛նօց բաց
կանէր, նրանց ռաստ կգար։

Անցկացաւ ըսէնց մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի՛ մի
շափաթ, օրէն մի օրը փռնչին բէրէց ղօնա՛ղլըդ սարքեց, թաքաւօ-
րին, սառաֆին ու կատէպանին (իրա մարթին) կանչէց ղօ՛նաղ, Դէ
նրանք էլ ի՛նչ պտի ասէին, ուրախ-ուրախ վէ՛ կացան, է՛կան։
Փռնչին էս իրէքին ընէ՛նց մի լավ քէֆ, ընէ՛նց մի լավ ուրախութլուն
շանց տվէց, վօր էլ ա՛սէլ չի ուղի։ Գլխնէրը վօր լավ տաքա՛ցաւ գի-
նուցը, փռնչին խօ՛սք բաց արէց։

— Ի՛նչ մարթ էք,— հարցրէց,— ի՛նչ բանի հմար էք էկէ ըս-
տէրանք։

Թաքաւօրն ու իրա սառաֆը շուղար շտվին, մնացին իրար էրէ-
սի մտիկ անէլօն։ Համա կատէպանը վօր տէհաւ սուս էն կացէ,
ձէն-ծպտօն չէն հանում, ինքը էն դճիցը վէ՛ կացաւ, մին-մին իրա

գլխովն անցկացածը նա'ղլ արէց, վօնց վօր յէս ձէզ նա'ղլ արի. ասեց. «Ըսէ'նց, ըսէ'նց, ըսէ'նց բան. էսքամ վախտ էլ յէս աշխարէ-աշխար, յերդրէ-յերգիր էմ ընդէ, իմ կնկա հավարին էմ ման գալիս»:

Թաքավօրն էս վօր լսէց թէ չէ, էն դհիցը ձէն տվէց.— Տղա',— ասէց,— էն թաքավօրը հէնց յէ'ս էմ' վօր կամ: Բաս վօր ըտէ'նց ա,— ասէց,— հախ ու նհախ, իմ ախշիկը յէս քէզանից կուզէմ, էլի դո'ւ խաբար կըլնէս նրանից, մարթ չէ:

— Յէ'ս էլ թաքավօրի սառաֆն էմ,— ձէն տվէց էն մէկէլ դհից սառաֆը,— յէս էլ իմ տղէ'ն կուզէմ քէզանից:

Նօր ըստէ փռնչին (թաքավօրի ախշիկը) մէշ ընգաւ:

— Թաքավօրի սառաֆ,— ասէց փռնչին,— դու քու տղէն էս ուզում' ընէնց չի':

— Հա',— ասէց սառաֆը:

— Տղիդ ինչ ա'րէլ էն,— ասէց փռնչին,— տէ'ղն ա, խի' էր ուզում թաքավօրի ախշկանը սըպանի, վօր վէրչն էն օղիէն իրա գլուխը դարւ էդ ասսու հալալ դատա'ստանն ա,— ասէց,— վօր էլ խօ'սք շոնէս ասէլու:— Յէննա թաքավօրին հարցրէց. — Թաքավօրն ապրած կ'էնա,— ասէց,— դու էլ քու ա'խշիկն էս ուզում, ընէնց չի':

— Հա',— ասէց թաքավօրը:

— Կա'ց,— ասէց,— էթամ բէրէմ:— Գնաց իրա օ'թախը, փռնչն-չու շօրէրը հա'նէց, ախշկա շօ'րէր հաքավ, գլուխը շի'նէց, կօկէց, զո'ւքվէց, զարթա'րվէց' էկավ ընդէ կա'ննէց:

Ախշկանը տէնալու բաշտան թաքավօրը մի' դհից, տղէն մի' դհից վազէցին, փաթաթվէցին ճտօվը, ուրախությունից լա'ց էլան, խօսք չէր գալի բէրաննէրը, վօր խօսսային: Սառաֆը հօ' մնացէլ էր է'ջ կտրած, բէրանը բաց սրանց մտիկ անէլօն:

Նօր նստէցին թազադան քէ'ֆ, ուրախություն, ընչանք լիսվէ-լիս կէ'րան, խմէ'ցին, ջա'ն ասէցին, ջա'ն լսէցին, իրար գլխով անց-կացածը նա'ղլ արին, հին դարմանը փամուռ ավիւն, դադդան, դաշ-դա'ն, դէ'սից, դէ'նից ասէ'ցին, խօսա'ցին, մասլահա'թ արին:

Սրանից դէնը մի քանի օր էլ կացան Ստամբօլ, նօր ըստէ ինչ ունէին-չունէին հավաքէ'ցին, կապօտէ'ցին, քօշ ու բարխա'նա արին, ճամփի թադա'րէք տէհան, շօրսօվ ընկան ճամփա դպա իրանց յեր-գիրը:

է'կան, է'կան, է'կան, շատն ու քիչն աստօծ գիտա, հասան իրանց յերգիրը: Նօր ըստէ թաքավօրը բէրէց իրա ախշկանը թազա-

դան նշա՛ն գրէց տղի վրէն, պսա՛կէց, օ՛խտն օր, օ՛խտը քշէր հար-
սանիք արէց: էլ ինչ քէ՛ֆ, ինչ ուրախութ՛յուն, ինչ դափ ու զուռնա՛,
վօր էլ հա՛լ ու հէսար շկար:

Նրանք հասան ի՛րանց մուրաղին, դուք էլ հասնէք ձէ՛ր մու-
րաղին:

